Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն



Մեր նախնիների հավատքին հավատարիմ

Ջոն Լինֆորդը 43 տարեկան էր, երբ նա և նրա կինը՝ Մարիան, և իրենց տղաներից երեքը որոշում կայացրին հեռանալ Անգլիայի Գռավելի քաղաքում գտնվող իրենց տնից և, հազարավոր մղոններ ճամփորդելով, միանալ Սոլթ Լեյքի հովտի Սրբերին: Նրանք այնտեղ թողեցին իրենց չորրորդ որդուն, ով միսիա էր ծառայում, վաճառեցին իրենց ունեցվածքը և տեղ զբաղեցրին Լիվերպուլի նավահանգստում կայանած *Թորնթոն* նավում:

Ծովով դեպի Նյու Յորք Սիթի, ապա այնտեղից հարթավայրերով դեպի Այովա ճամփորդությունն անցավ առանց միջադեպերի: Ինչևէ, դժվարությունները սկսվեցին, երբ Լինֆորդները և այլ Վերջին Օրերի Սրբեր, ովքեր նավարկեցին *Թորնթոն* նավով, հեռացան Այովա քաղաքից 1856 թվականի հուլիսի 15-ին, որպես Ջեյմս Գ. Վիլլիի տխրահռչակ խմբի անդամներ:

Դաժան եղանակը և դժվարություններով լի ճամփորդությունն իր հետքը թողեց խմբից շատերի վրա՝ ներառելով Ջոնին: Նա, ի վերջո, այնքան ծանր հիվանդացավ ու թուլացավ, որ նրան ստիպված տանում էին ձեռնասայլակով: Երբ նրանք հասան Վայոմինգ, նրա վիճակը զգալիորեն վատթարացավ: Սոլթ Լեյք Սիթիից նրանց օգնություն հասավ հոկտեմբերի 21-ին՝ Ջոնի մահկանացու ճամփորդության ավարտից ընդամենը ժամեր անց: Նա մահացավ այդ օրը վաղ առավոտյան՝ Սվիթվոթեր գետի ափին:

Արդյո՞ք Ջոնն ափսոսում էր, որ հարմարավետ ու հեշտ կյանքը փոխարինել էր դժվարություններով և զրկանքներով լի կյանքով, որպեսզի տաներ իր ընտանիքը Սիոն:

«Ոչ, Մարիա»,- ասել էր նա իր կնոջը մահից անմիջապես առաջ: «Ես ուրախ եմ, որ մենք եկանք: Ես կմահանամ մինչև Սոլթ Լեյք հասնելը, բայց դու և տղաները կհասնեք,և ես չեմ զղջում այն ամենի համար, ինչի միջով անցել ենք հանուն այն բանի, որ մեր տղաները կարողանան մեծանալ և ընտանիքներ կազմել Սիոնում»:[1]

Մարիան ու իր որդիները տեղ հասան: Երբ Մարիան մահացավ մոտ 30 տարի անց, նա և Ջոնը թողեցին հավատքի, ծառայության, նվիրվածության ու զոհաբերության ժառանգություն:

Վերջին Օրերի Սուրբ լինելը նշանակում է լինել ռահվիրա, քանի որ ռահվիրան «այն մարդն է, ով գնում է առջևից, որպեսզի ճանապարհ պատրաստի կամ բացի մյուսների համար»:[2] Եվ ռահվիրա լինելը նշանակում է լավ իմանալ, թե ինչ է նշանակում զոհաբերել: Չնայած Եկեղեցու անդամներին այլևս չեն խնդրում թողնել իրենց տները և ճամփորդել դեպի Սիոն, նրանք հաճախ պետք է անցյալում թողնեն հին սովորությունները, վաղեմի սովորույթները և փայփայած ընկերներին: Ոմանք կայացնում են խիստ ցավոտ որոշումներ՝ հեռանալու ընտանիքի անդամներից, ովքեր դեմ են լինում իրենց Եկեղեցու անդամությանը: Այնուամենայնիվ, Վերջին Օրերի Սրբերն առաջ են շարժվում,

աղոթելով, որ թանկագին էակները մի օր կհասկանան ու կընդունեն:

Ռահվիրայի ճանապարհը հեշտ չէ, սակայն մենք հետևում ենք մեծն Ռահվիրային՝ Փրկիչին, ով քայլեց մեզանից առաջ՝ ցույց տալով մեզ ճանապարհը, որով պետք է հետևենք:

«Եկ, հետեւիր ինձ»,[3] - հրավիրել է Նա:

«Ես եմ ճանապարհը եւ ճշմարտութիւնը եւ կեանքը»,[4] - հայտարարել է Նա:

«Եկեք, ինձ մոտ»,[5] - կանչել է Նա:

Ճանապարհը կարող է բարդ լինել: Ոմանք գտնում են, որ դժվար է դիմակայել հիմարների ծաղր ու ծանակին, ովքեր ծաղրում են մաքրաբարոյությունը, ազնվությունը և Աստծո պատվիրաններին հնազանդվելը: Աշխարհը նվաստացուցիչ է համարում սկզբունքին հավատարիմ մնալը: Երբ Նոյին պատվիրվեց տապան կառուցել, անմիտները նայեցին անամպ երկնքին, ապա ծիծաղեցին ու ծաղրեցին, մինչև անձրև սկսվեց:

Դարեր առաջ Ամերիկյան մայրցամաքում մարդիկ կասկածեցին, վիճաբանեցին և չհնազանդվեցին, մինչև որ կրակը պատեց Զարահեմլան, երկիրը ծածկեց Մորոնիհահը և ջրերը ծածկեցին Մորոնին: Այլևս չկար ծաղր ու ծանակ, զազրախոսություն և մեղք: Դրանք փոխարինվեցին մռայլ լռությամբ, ապա թանձր խավարով: Աստծո համբերության բաժակը լցվել էր, Նրա սահմանած ժամանակը լրացել:

Մարիա Լինֆորդը երբեք չկորցրեց իր հավատքը՝ անկախ Անգլիայում հանդիպած հալածանքներից, և դժվարություններից, որոնց հանդիպեց դեպի «Աստծու նշած տեղը»[6] ճամփորդելիս, և դրանց հաջորդող փորձություններից, որոնք նա տարավ հանուն իր ընտանիքի և Եկեղեցու:

1937 թվականին Մարիայի հուղարկավորության ժամանակ Երեց Ջորջ Ալբերտ Սմիթը (1870–1951) հարցրեց նրա ժառանգներին. «Դուք հավատարիմ կմնա՞ք ձեր նախնիների հավատքին: . . . Ձգտեք արժանի լինել բոլոր զոհաբերություններին, որոնք [նրանք] կատարել են ձեզ համար»:[7]

Մինչ մենք կձգտենք կառուցել Սիոնը մեր սրտերում, մեր տներում, մեր համայնքներում և մեր երկրներում, եկեք հիշենք վճռական քաջությունը և հաստատուն հավատքը նրանց, ովքեր տվեցին ամեն ինչ, որպեսզի մենք կարողանանք վայելել վերականգնված ավետարանի օրհնությունները և դրանից բխող հույսը և խոստումը Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Andrew D. Olsen, *The Price We Paid* (2006), 45–46, 136–37:
2. *Օրսֆորդի Անգլերեն Բառարան,* (1971) «ռահվիրա»:
3. Դուկաս 18.22
4. Հովհաննես 14.6
5. Հովհաննես 7.37, տես նաև 3 Նեփի 9.22
6. «Եկեք Սրբեր», *Հիմներ,* համար 2:
7. Տես Olsen, *The Price We Paid,* 203–4:

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Խնդրեք նրանց, ում ուսուցանում եք, մտածել մարդկանց մասին, ովքեր իրենց կյանքում անցել են իրենցից առաջ և ռահվիրաներ են եղել իրենց համար: Ապա հարցրեք նրանց, թե երբ են նրանք ռահվիրաների դերում եղել և ուղի պատրաստել ուրիշների համար: Հրավիրեք նրանց խորհել այն պահերի մասին, երբ զոհաբերել են ինչ-որ բան, և, ըստ իրենց, ինչու արժեր դա անել: Ապա կարող եք խրախուսել նրանց գրել իրենց վկայությունը «մեծագույն Ռահվիրայի»՝ Փրկիչի մասին:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Հավատքին հավատարիմ

Նախագահ Մոնսոնը պատմում է ռահվիրաների մի ընտանիքի մասին, ապա մեջբերում է Երեց Ջորջ Ալբերտ Սմիթի խոսքերը. «Դուք հավատարիմ կմնա՞ք ձեր նախնիների հավատքին: . . . Ձգտեք արժանի լինել բոլոր զոհաբերություններին, որոնք [նրանք] կատարել են ձեզ համար»:7 Անկախ այն բանից՝ դուք ունեք ռահվիրա նախնի, թե Եկեղեցում առաջին սերունդն եք, արդյո՞ք հետևում եք հավատքի օրինակներին առաջնորդություն և ուժ ստանալու համար: Ահա լավ առաջարկ, ինչից կարող եք սկսել.

1. Կազմեք այն մարդկանց ցանկը, ում հանդեպ մեծ հարգանք ունեք: Նրանք կարող են լինել ձեր իսկ ընտանիքի անդամները (նախնիները կամ ներկայիս անդամները), ընկերները, Եկեղեցու ղեկավարները կամ մարդիկ սուրբ գրություններից:

2. Գրեք նրանց այն հատկանիշները, որոնք ձեզ դուր են գալիս: Ձեր մայրիկն իսկապե՞ս համբերատար է: Միգուցե ձեր ընկերը բարյացակամ է ուրիշների հանդեպ: Հավանաբար ձեզ դուր է գալիս Ջորավար Մորոնիի քաջությունը:

3. Ձեր ցանկից ընտրեք հատկանիշներից մեկը և հարցրեք ինքներդ ձեզ. «Ինչպե՞ս ես կարող եմ

ձեռք բերել այս հատկանիշը: Ես ի՞նչ պետք է անեմ՝ իմ կյանքում այն զարգացնելու համար»:

4. Գրեք այդ հատկանիշը զարգացնելու ձեր ծրագրերը և դրեք մի այնպիսի տեղ, որ հաճախ տեսնեք, որպեսզի հիշեք ձեր նպատակի մասին: Աղոթեք Երկնային Հորը օգնության համար և հետևողականորեն ստուգեք ձեր առաջընթացը: Երբ զգաք, որ բավականաչափ զարգացրել եք այդ հատկանիշը, կարող եք ընտրել նոր հատկանիշ և աշխատել այդ ուղղությամբ:

Հիշեք, որ երբ լավ հատկանիշներ ենք զարգացնում մեր մեջ, մենք ոչ միայն պատվում ենք մեր նախնիների հավատքը և նրանց կատարած զոհաբերությունը, այլ նաև կարող ենք լավ ազդեցություն գործել նրանց վրա, ովքեր շրջապատում են մեզ:

ԵՐԵԽԱՆԵՐ

Դու նույնպես ռահվիրա ես:

Ռահվիրաներն այն մարդիկ են, ովքեր ուղի են պատրաստում ուրիշների համար:

Կարող եք նկարել կամ գտնել ձեր նախնիներից մեկի նկարը: Կարո՞ղ եք գտնել պատմություն, թե ինչպես են նրանք պատրաստել ուղի, որին հետևել եք դուք: Գրեք երկու ուղիներ, թե ինչպես կարող եք ռահվիրա լինել այսօր: Դուք կարող եք կիսվել ձեր մտքերով ձեր հաջորդ ընտանեկան երեկոյի ժամանակ:

© 2016 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/16: Թարգմանության հաստատումը. 6/16: *First Presidency Message, July 2016*-ի թարգմանությունը: Armenian. 12867 201

Ծնող լինելու մեր ներուժը

Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և ձգտեք հասկանալ, թե ինչով կարող եք կիսվել: «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» հոչակագիրը հասկանալն ինչպե՞ս կմեծացնի ձեր հավատքն առ Աստված և կօրհնի նրանց, ում դուք այցելում և ուսուցանում եք: Լրացուցիչ տեղեկության համար այցելեք reliefsociety.lds.org:

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

«Շատ կարևոր էր, որ Աստծո հոգեղեն զավակներն ունենային մահկանացու ծնունդ և դեպի հավերժական կյանք զարգանալու հնարավորություն»,- ուսուցանել է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դալլին Հ. Օուքսը: «Երջանկության մեծ ծրագրի վերջնական նպատակի լույսի ներքո ես կարծում եմ, որ ամենամեծ գանձերն այս երկրի վրա և երկնքում մեր երեխաներն են ու մեր ժառանգները»:[1]

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենն ասել է.

«Մենք հավատում ենք ընտանիքներին, և մենք հավատում ենք երեխաներին: . . .

«. . . Աստված ասաց [Ադամին ու Եվային]. Աճեցէք եւ շատացէք, եւ լցրեք երկիրը» [Ծննդոց 1.28]: . . .

Այս պատվիրանը չի մոռացվել կամ մի կողմ դրվել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում»:[2]

Չնայած ոչ բոլորն են ծնողներ դառնում այս կյանքում, մենք կարող ենք հոգ տանել ցանկացած տարիքի երեխաների համար: Մենք վայելում ենք Երկնային Հոր ընտանիքի մի մասը լինելու օրհնությունները և մենք վայելում ենք երկրային ընտանիքի մի մասը լինելու ուրախությունն ու դժվարությունը: Եվ շատերն էլ կվայելեն ծնող լինելու բերկրանքը հավերժության մեջ:

Լրացուցիչ սուրբ գրություններ

Սաղմոս 127.3, Մատթեոս 18.3–5, 1 Նեփի 7.1, Մովսես 5.2–3

Իրական պատմություններ

«Այսօր աշխարհում շատ ձայներ նսեմացնում են երեխաներ ունենալու կարևորությունը կամ խորհուրդ են տալիս հետաձգել կամ սահմանափակել երեխաներ ունենալը»,- ասել է Երեց Անդերսենը: «Իմ դուստրերը վերջերս ուղարկեցին ինձ մի նյութ, որը գրված էր Քրիստոնյա կնոջ կողմից (ոչ մեր հավատքից), ով հինգ երեխա ունի: Նա գրում է. «Մեծանալով այս քաղաքակրթության մեջ, շատ դժվար է աստվածաշնչյան մտածելակերպ ունենալ մայրության վերաբերյալ: . . . Երեխաները դասվում են քոլեջից շատ ավելի ցածր: Միանշանակ, աշխարհով մեկ շրջագայելուց ցածր: Գիշերային ժամանցներ անցկացնելուց ցածր: Մարզասրահում ձեր մարմինը կատարելագործելուց ցածր: Ցածր ցանկացած աշխատանքից, որը դուք ունեք կամ հույս ունեք ունենալու»: Նա այնուհետև ավելացնում է. «Մայրությունը հաճելի զբաղմունք չէ, այն կոչում է: Դուք չեք հավաքում երեխաներ, որովհետև նրանք ձեզ համար ավելի գեղեցիկ են, քան նամականիշները: Դա այն չէ, ինչ կարող եք անել, եթե ժամանակը բավականացնի»:[3]

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Dallin H. Oaks, “The Great Plan of Happiness,” *Ensign,* Nov. 1993, 72, 75.
2. Նիլ Լ. Անդերսեն, «Երեխաներ», *Լիահոնա,* նոյ. 2011, 28:
3. Նիլ Լ. Անդերսեն, «Երեխաներ», 28:

Խորհեք այս մասին

Ինչո՞վ է մեր երկրային ընտանիքը նման մեր երկնային ընտանիքին:

© 2016 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/16: Թարգմանության հաստատումը. 6/16: *First Presidency Message, July 2016*-ի թարգմանությունը: Armenian. 12867 201